

ԱՐԱՐԴՈՒԹԵԱՆ, ԱԴԱՄԻ ԵՒ ՆՈՑԵԱՆ ԼԵԶՈՒԻ ՄԱՍԻՆ

Լեզուի, և յատկապէս լեզուների բաժանման հարցը Սուրբ Գրքում միանշանակ չէ. Ծննդ. Ժ. 5ից իմանում ենք Նոյեան սերունդների մասին, և որ նրանցից «մեկնեցան... իւրաքանչիւր ըստ լեզուս յազգս իւրեանց եւ ի տոհմս իւրեանց» (հմմտ. Ծննդ. Ժ. 5—Յարեթեանք, Ժ. 20—Քամեանք, Ժ. 31—Սէմականք): Այս հատուածների համաձայն՝ լեզուների և տոհմերի բաժանում կայ Տապանակիր լեռան երկրից հեռանալու պահից իսկ սկսեալ, մինչդեռ յաջորդ գլխում, «ի խաղալն նոցա յարեւելից» ասելով, տեսնում ենք, որ ընդհուպ աշտարակաշինութիւն «էր ամենայն երկիր լեզու մի, եւ բարբառ մի ամենեցուն» (հմմտ. Ծննդ. ԺԱ. 1—9)¹: Նախ քան այս գաղափարներն արծարծելը իտալացի հետազոտող Ումբերտո Էկոն յիշում է նաև լեզուին վերաբերող նախընթաց դրուագները. Սուրբ Գրոց համաձայն՝ սկզբնապէս հնչում է «Եղիցի լոյս» հրամանը (արարչութիւնն իրականանում է խօսքով, կամ ինչպէս սատմութեան է ասում՝ «բանի Տեան երկինք հաստատեցան... Նա ասաց. եւ եղեն» (ԼԲ. 6, 9): Այնուհետև Աստուած «կոչեաց զլոյսն տիւ, եւ զխաւարն կոչեաց զիշեր», որ յուշում է, թէ տուեալ իմաստներն արտայայտող բառեր ցայդ պահը չեն եղել: Յետոյ արարչական միւս հրահանգն է՝ «Ժողովեցի ն ջուրքդ որ ի ներքոյ երկնից ի ժողով մի»... Իսկ երբ վերջապէս Աստուած ստեղծում է մարդուն, հաղորդակցութեան միջոցի կարիք է առաջանում, և Նա օրհնում է ասելով՝ «Աճեցէ ք եւ բազմացարո ւք եւ լցէ ք զերկիր»: Սուրբգրական հատուածներին հետևելով՝ լեզուի «գարգացումը» կարող ենք բաժանել հետևեալ շրջանների.

ա) Դար արարչական կամ աստուածային լեզուի, երբ դրա միակ կիրառողն Արարիչն էր, և Ինքն էր որոշում, թէ իրերն ի՛նչ անուններով պիտի կոչուեն (Ծննդ. Ա. «կոչեաց զլոյսն տիւ, եւ զխաւարն կոչեաց զիշեր»):

բ) Ադամեան փուլ, երբ Ադամը գոյակներին անուն շնորհելու իրաւունք ստացաւ (Ծննդ. Բ. 19-20. «Եւ ստեղծ եւս Տէր Աստուած զամենայն զազանս վայրի, եւ զամենայն թռչունս երկնից. եւ աճ զնոսա առ Ադամ տեսանել զինչ կոչեցէ զնոսա: Եւ ամենայն շնչոյ կենդանւոյ զինչ եւ անուանեաց Ադամ, այն անուն է նորա: Եւ կոչեաց Ադամ անուանս

¹ Տե՛ս U. Eco, The Search for the Perfect Language, Translated by J. Fentress, Padstow, Cornwall, 1994, էջ 7–10:

ամենայն անասնոց, եւ ամենայն թռչնոց երկնից, եւ ամենայն զազանաց վայրի»²:

զ) Նոյեան շրջան, երբ բոլորը ջրասոյգ եղան, և փրկուեց միայն ար-
դար Նահապետի ընտանիքը, ուստի լեզուի կիրառութիւնը միայն ի-
րենց էր յատուկ:

Եւ վերջապէս՝

դ) Լեզուների խառնակում և դրան յաջորդող ժամանակներ³:

Լիովին հասկանալի է, որ ամեն քրիստոնէայի (և ընդհանրապէս
Հնգամատեանի վրայ հիմնուող կրօն դաւանողի) համար առնուազն
հետաքրքիր պիտի լինի, թէ ինչպիսի՞ հնչմունք են ունեցել արարման
առաջին նախադասութիւնները, ո՞րն է եղել արարչութեան լեզուն, ո-
րով աւելի ուշ Աստուած պիտի խօսէր Ադամի հետ... Եւ արդեօք մնաց,
թէ՞ վերացաւ այն: Ցաւօք ներկայ հարցում համակարծութիւն չկայ: Ո-
մանք պնդում են, որ մեղքով ընկնելու պահից իսկ մարդու համար ան-
հասանելի և անհասկանալի դարձաւ արարչական լեզուն, իսկ այլոց
համոզմամբ՝ լեզուն մնաց⁴: Նախնական լեզուի մնալու մասին տեսա-
կէտները բազում են. օրինակ կան քննաբաններ, որ վստահ են, թէ
խառնակութեան պահին արարչական լեզուն «Բարելոնում էր, բայց ա-
նադարտ մնաց», իսկ ուրիշների համոզմամբ՝ «Նոյեան որոշ ժառանգ-
ներ Բարելոնում չէին, ուստի շարունակեցին խօսել պապենական լեզո-
ւով և այդու կենդանի պահեցին նախնի լեզուն»⁵: Եւ եթէ արարչութեան
լեզուն մնացել է, ապա բնական է, որ մարդիկ փորձել են պարզել, թէ
ո՞ր լեզուն է այն: Օրինակ՝ «Թալմուդականներն այն կարծիքի են, թէ ա-
րամէրէնն է նախնական լեզուն, և որ Ադամն ու Եւան այդ լեզուով են
հաղորդակցուել դրախտում»⁶: Լեզուի ժառանգորդներին փոխելով
հանդերձ՝ զհիտնականներն այն հիմնականում տեղաւորում են Միջա-
զետքում, չնայած կան նաև դրանով չբաւարարուողներ: Առաւելապէս
իբրև ճարտարապետ յայտնի՝ արքայական հետախոյզ և ինքնուս հե-
տազօտող Ջօն Ուեբբը (1611–1672 թթ.)⁷ համոզուած էր, որ նախնի լե-

² Ղուրանն այլ պատկեր է ներկայացնում. ոչ թէ Ադամն է «անուանակոչողը», այլ Արարիչը նրան սովորեցնում է անունները, իսկ յետոյ առաջարկում հրեշտակներին, որ հնարաորութեան դէպքում թուեն անունները վերջապէս հրահանգելով Ադամին, որ հրեշտակներին ասի դրանք. « وَعَلَّمَ آدَمَ الْأَسْمَاءَ كُلَّهَا فَذَرَاهُمْ عَلَى الْمَلَائِكَةِ فَقَالَ أَنْذِرُونِي بِأَسْمَاءِ هَؤُلَاءِ إِنْ قَالُوا يَا آدَمُ أَنْذِرْنَاهُمْ بِأَسْمَائِهِمْ لَمَّْا أَنْذَرْتَهُمْ فِيهَا أَنْكَ لَا عَلِمَ لَنَا إِلَّا مَا عَلَّمْتَنَا إِنَّكَ أَنْتَ الْعَلِيمُ الْحَكِيمُ (31) كَذَّبْتُمْ صَادِقِينَ (قَالَ يَا آدَمُ أَنْذِرْنَاهُمْ بِأَسْمَائِهِمْ لَمَّْا أَنْذَرْتَهُمْ فِيهَا أَنْكَ لَا عَلِمَ لَنَا إِلَّا مَا عَلَّمْتَنَا إِنَّكَ أَنْتَ الْعَلِيمُ الْحَكِيمُ) (տե՛ս u Մուրախ Բ.):

³ Հմմտ. D. McCausland, Adam and the Adamite; or, The Harmony of Scripture and Ethnology, London, 1872, էջ 182:

⁴ Տե՛ս u “Nature and Scripture in the Abrahamic Religions: Up to 1700”, Ed. J. M. Van Der Meer, S. Mandelbrote, Boston, 2008, էջ 300-303:

⁵ J. J. Bono, The Word of God and the Languages of Man: Interpreting Nature in Early Modern Science and Medicine, vol. 1, Univ. of Wisconsin Press, 1995, p. 62.

⁶ D. Smith, Cuneorum Clavis. The Primitive Alphabet and Language of the Ancient Ones of the Earth, London, 1875, p. 4.

⁷ Տե՛ս u <https://enacademic.com/dic.nsf/enwiki/200390>:

գուն չինարենն է՝... Փնտրտուքի մասնակիցների «նախասիրություններն ու նախապատույթիները» այստեղ որևէ սահմանափակում չեն ճանաչում: Սակայն առաւել տարածուած է այն կարծիքը, թէ լեզուն ժառանգել են Երեքի զաւակները, և որ այն «երբայեցին է», ինչն իրականում որևէ քննադատութեան չի դիմանում, ինչպէս ցոյց են տուել հետազոտողները: Մանրամասն արծարծուածներին չանդրադառնալով՝ այստեղ յիշենք միայն ի պաշտպանութիւն երբայեցերէնի իշխող և շատերի մտքերը ճնշող կարծիքը, որ թերևս կարելի է ձևակերպել այսպէս. Ամենայարգի, ամենահին, իմա՝ Ադամեան լեզուն երբայեցերէնն է, որովհետև այդ լեզուով գրուեցին Սուրբ Գրքերը: Պնդում, որ բազմիցս մերժուել է՝ Աստուածաշնչում նաև այլ լեզուների առկայութեան հանգամանքով: Հարցի առնչութեամբ առանձնակի կարևորութիւն է ձեռք բերում յատկապէս այն հանգամանքը, թէ ի՞նչ լեզուով է եղել Օննդոցը, որտեղ խօսուում է հնամենի լեզուի մասին: Այսօր ապացուցուած է, որ շատ դրուագներում Սովսէս մարգարէն, եթէ անմիջականօրէն չի օգտուել կամ ներմուծել, առնուազն կրել է հարևան ժողովուրդների ազդեցութիւնը: Դեռևս ԺԸ. դարում ժամանակի երևելի մտածող Կոնստանտին Տրանսուա Վօլնէրը (բաւարար է յիշել, որ նրա երկերի թարգմանութեամբ, ի թիւս այլոց, զբաղուել է նաև ԱՄՆ 3-րդ նախագահ Թ. - Ջեֆերսօնը), ծաւալուն քաղուածներ անելով Յովսէպոս Փլաիոսից, եզրայանգում էր. «Ակներեւ է, որ Յովսէպոսը հեռու է Բերոսոսին եւ միւս մատենագիրներին մեղադրելուց, թէ օգտուել են Սովսէսից, որին ինքը համարում է Օննդոց գրքի հեղինակ. Ընդհակառակը, Յովսէպոսը յղում է քաղդէացիների, փինիկեցիների եւ հայկական յուշարձանները, որպէս առաջին եւ սկզբնական վկայութիւններ, որոնց սոսկ արտացոլանքը կամ անդրադարձն է Օննդոցը»⁹:

* * *

Նկատենք նաև, որ վաղնջական շրջանում կիրառուած լեզուի վերաբերեալ պատկերացումների, համոզմունքների և տեսակէտների սպառիչ ապացուցումը դժուարի, գուցէ նաև անհնարինի բնագաւառից է. քննարկման մասնակիցները դրանք կա՛մ պարզապէս ընդունում են, կա՛մ չեն ընդունում, որովհետև բացարձակ ու անհերքելի ապացոյցներ չկան, ինչպիսին, ասենք, կլինէր Ջիովաննի Նաննիի աւանդած պատմութեան մէջ յիշատակուող սիւնը, որի վրայ, Արարատից իջնելուն պէս, Նոյ նահապետը գրառել է ջրհեղեղի դէպքերը¹⁰: Եթէ գտնուի այդ սիւնը, և՛ առաջին լեզուի, և՛ առաջին այբուբենի հարցը կպարզուի՝

⁸ Տե՛ս J. Webb, An Historical Essay: Endeavoring a Probability that the Language of the Empire of China is the Primitive Language, Nath. Brook, 1669, 212 էջ:

⁹ C. F. Volney, New Researches on Ancient History, Translated by Colonel Corbet, Third Edition, Vol. I., London, 1822, p. 117.

¹⁰ Տե՛ս «An historical treatise of the travels of Noah into Europe: Containing the first inhabitation and peopling thereof». Done into English by Richard Lynche, Gent. London, 1601, § 5:

այլևս չենք խօսում Փրկութեան լեռան և Արդարի բնակութեան վայրի մասին: Իսկ այժմ, որովհետև անհերքելի ապացոյցներ դեռ չկան, թե՛ նախնի լեզուին կողմ, թե՛ դէմ արտայայտուող հետազօտողները բաւարարում են տրամաբանական փաստարկներով, որոնք հիմնուում են սուրբգրական որոշակի կէտերի վրայ: Օրինակ առանցքային հարցերից է, թե՛ ջրհեղեղից յետոյ որտե՞ղ հանգրուանեց Նոյը, որովհետև «նախնի լեզուի գոյատևման» տեսութեան մի ճիշդ գլխաւոր փաստարկներն այս Նահապետին են առնչուում: Ուստի զարմանալի չէ, որ մեր յիշատակած Զօն Ուեբբը, ի թիւս այլ հանգամանքների, չինարէնի նախնականութեան վերաբերեալ իր խօսքը հիմնաւորելու համար ստիպուած է եղել «ապացուցել», որ Սուրբ Գրոց Արարատն իրականում Չինաստանի սահմանին է, և Նոյն այդտեղ է ապրելիս եղել մինչ ջրհեղեղը¹¹: Ուստի, ինչպէս տեսնում ենք, «նախնի լեզուի գոյատևման» վարկածը պայմանաւորում է այլ և այլ պնդումների մի ամբողջական համակարգ, որի բաղադրիչների միասնութիւնը կա՛մ պարզապէս ընդունում են, կա՛մ հերքում: Վերևում ուրուագծեցին նախնականի գոյատևման երկու հնարաւոր ճանապարհները. ա) «Այն Բաբելոնում էր, բայց անաղարտ մնաց», բ) «Այն Բաբելոնում չէր, դրա համար անաղարտ մնաց»: Առաջինին անդրադարձ կլինի, իսկ երկրորդը, ինչպէս կարելի է նկատել, ամբողջութեամբ կապուած է Նոյ նահապետի հետ: Այս ուղղութիւնը ճիշտ ճանաչողները փաստօրէն ընդունում են, որ Տապանը կանգ առաւ Արարատեան երկրում (ըստ «յարմարութեան» փոխելով երկրի աշխարհագրական դիրքը, օրինակ՝ հասցնելով Չինաստան)... ընդունում են, որ Նոյը մնաց և բնակուեց այնտեղ... չգնաց Բաբելոն... չգրկուեց լեզուից... իր սերունդները մնացին այդ երկրում... և շարունակեցին խօսել պապենական լեզուով:

Դեռևս 1784 թուականին Միքայել վրդ. Չամչեանը այս շարքին յաւելում է մի կարևոր դրուագ-բացատրութիւն, որ առանց առարկութեան ընդունում են նաև բազում այլ գիտնականներ. այն է՝ ջրհեղեղի կապակցութեամբ Աստուածաշնչում յիշուած Արարատեան երկիրը Հայոց աշխարհն է, որից էլ հետևում է՝ «այն առաջին բարբառ՝ որով խօսեին մարդիկ յԱդամայ անտի մինչև ցրաժանումն լեզուաց, Հայոցն էր. որ և մնաց մինչև ցայժմ: Եւ այս կարէ հաստատիլ դիւրաւ»¹²: Ուսումնասիրութեան նիւթ տրամադրող հիմնական աղբիւրի՝ Սուրբ Գրքի և աստուածաբանական գիտելիքի համակողմանի և հմուտ դիտարկումներով - Չամչեանը, ինչպէս և խոստանում է, դիւրաւ ապացուցում է իր պնդումը: Եւ արդէն Գաբրիէլ Այուազովսկու խմբագրութեան տարիներին, Չամչեանի փաստարկներին և հիմնաւորումներին նորերն աւելացնելով, «Բազմավէպը» գրելու էր. «Երբոր մէկը գիտէ թէ Ադամայ դրախտը Հայաստանի մէջ էր, և թէ Նոյ նահապետը տապանէն որ ելաւ՝ Հայաստանում էր»:

¹¹ Տե՛ս **J. Webb**, նշվ. աշխ., էջ 79 և յջ.:

¹² «Պատմութիւն Հայոց», հտ. Ա., Վենետիկ, 1784, էջ 153:

տան իջաւ ու հոն բնակեցաւ, ուրիշ նոր սպացոյցներու չկարօտիր որ համոզուի՝ թէ Հայոց լեզուն այնչափ հին է որ Ադամայ լեզուն կրնայ քսուիլ, և թէ ուրիշ ամեն լեզուներու սկիզբն ու մայրն է»¹³: Փաստօրէն մեր վարդապետների կառուցած տրամաբանական շարքով ոչ թէ պարզապէս Տապանը կանգ առաւ Արարատեան երկրում... Նոյը մնաց և բնակուեց այնտեղ... չգնաց Բաբելոն... չգրկուեց լեզուից... իր սերունդները մնացին այդ երկրում... և շարունակեցին խօսել պապենական լեզուով... այլ սկիզբը դրուած է եղել արարչութիւնից՝ Դրախտը եղել է Արարատի մօտ... դրախտի բնակիչները խօսել են այն լեզուով, որ հասնելով Նոյ նահապետին՝ ժառանգուել է նրա՝ Արարատում բնակուող սերունդներին:

Պէտք է առանձնակի ընդգծել, որ Սուրբ Գրքի և աստուածաբանութեան ասպարէզում հայ վարդապետների խորին գիտելիքներն ու տրամաբանութիւնը պարզապէս նախանձելի են դիտարկուող հարցի պարագային: Հետևաբար նրանց տեսակետները քննադատել փորձողները պէտք է կռուաններ որոնեն այլ ուղղութիւններում, ասենք՝ լեզուաբանութեան ոլորտում: Օրինակ՝ Աճառեանի արմատական բառարանից իմանում ենք, որ մեր լեզուի բառերի զգալի մասը փոխառեալ է: Մա ինքնին փաստարկ կարող է լինել հայերէնի՝ հնագոյնը լինելու դէմ. ի՛նչ նախնի լեզու, որ տալու փոխարէն ինքն է ուրիշներից վերցրել: Բայց այստեղ պէտք է նկատ առնենք լեզուական քննութիւն իրականացնելու պայմանները, յատկապէս նիւթի հաւաքման հնարաւորութիւնը, որի պատճառով աւելի վաղ գրառուած լեզուի բառապաշարն անհամեմատ շահաւէտ դիրքերում է յայտնուում: Եւ դրանից ելնելով՝ ուսումնասիրողները թեքում են լեզուներից մէկի կամ միւսի բառերի փոխառեալ լինելու կողմը՝ այդու ճանաչելով իբրև հին, սկզբնական: Հարցի առընչութեամբ Ղուկաս Ինճիճեանն ասում է. «Այլ և բազում քննութեանց պէտք են յորոշել թէ ո՞ր լեզու յումմ է առեալ. բաց ի բառից ինչ յայտնի եղելոց. վասն որոյ գոր Սքրոտեր ի Գանձարանին Արամեան թղթ. 45. թուէ զհայկական բառս առեալս յերբայականէն, ի քաղղէացոց, յարաբացոց, և ի Պարթևաց. ոչ վասն ամենեցուն եմք հաւանեալ: Չի բաց ի յումանց՝ մարթ է ասել, թէ գուցէ ի հայկական լեզուէ են ածանցեալ առ նոսա, և ոչ ի նոցունց ի Հայս (ընդգծումը մերն է.-էմմ. վրդ. Ա., Գ. և Ս. Մ.). որպէս զանունս Տիգրանակերտ (ընդգծումը հեղինակինն է). ի նախնեաց Ստեփաննոս ի լեզուէ Պարթևաց ասէ ածանցեալ. որպէս և յարդեաց Հարտուին ի վերլուծութեան Պլինիոսի Զ. 10. յերբայեցոց և ի քաղղէացոց լեզուէ. բայց հմտագոյնն առ նախնիս Իսիւրիոս՝ ասէ լինել բառ հայկական. որպէս և է»¹⁴: Բնչպէս տեսնում ենք, Միսիթարեան վարդապետը վիճարկում է փոխառութեան հանգա-

¹³ «Հայոց լեզուին հնութիւնը». «Բազմավէպ», 1844, հտ. Բ., էջ 332-336:

¹⁴ Ղ. վրդ. Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հտ. Գ., Վենետիկ, 1835, էջ 6:

մանքը՝ անմիջական օրինակով ցոյց տալով սխալուելու հաւանակա-
նութիւնը: Բառամթերքի շրջանառութեան-փոխառութեան հարցում
մենք առաւել հակուած ենք Դօսինիք ՄրքՔառուսլանդի կարծիքին, հա-
մաձայն որի՝ ոչ թէ հնդիկն է սովորել (իմա՝ փոխառել) յոյնից, կամ յոյնը
հնդիկից, այլ «այս երևոյթի պատճառն այն է, որ նրանք բոլորը (և նրան-
ցից իւրաքանչիւրը) լեզուն ժառանգել են ընդհանուր նախնուց»¹⁵:

Եւ ներկայ համապատկերում դարձեալ գանք վերնի հարցին. ի՞նչ
նախնի լեզու, որ տալու փոխարէն ինքն է ուրիշներից վերցրել: Ու-
սումնականները շատ են սիրում խօսել մեր լեզուի փոխառութիւնների
մասին անասելի սակաւ տեղ յատկացնելով հայերէնից արուած փո-
խառութիւններին (առաւել ևս հայերէնի թողած ազդեցութեանը), թէն
այդ ուղղուածութեան երկեր, և ոչ յետին գիտնականների, ևս եղել են: -
Բայց նման աշխատանքների հայ հեղինակները մեղադրուել են «ազ-
գային սնապարծութեան» մէջ, իսկ իրենց երկերը դուրս են մղուել գի-
տական շրջանառութիւնից: Ռօբերթ Էլլիսի ձևակերպումը, թէ հայերէ-
նը հնագոյն ժամանակներում Հայքից մինչև Էթրուրիա խօսուած լեզու-
ւի միակ կենդանի շաւիղն է¹⁶, արժանի ուշադրութեան չարժանացաւ,
որովհետև Քէմբրիջի պրոֆեսորը «լեզուական համեմատութեանց մէջ
ինչուան Ափրիկէի ու Փերուի լեզուներէ վկայութիւններ կը բերէր»¹⁷:
Աւելի ուշ «Պուկկէ (ընդունելի են նաև Փուկկէ, Բուզզէ տառադարձում-
ները)... հետամուտ է նորէն ապացուցանելու ձեռք զարնել զազգակ-
ցութիւն ետրուսկ լեզուի ընդ հայկականի»¹⁸, բայց ուսումնական այնպի-
սի պաշարաւ եւ պատրաստութեամբ, որով յիրաւի կը գրաւէ զընթեր-
ցողն՝ ոչ օտար ի ճշմարտութենէ ենթադրութեանց»¹⁹: Ընդ որում՝ Պուկ-
կէն ոչ թէ պարզապէս հայերէն-էթրուսկերէն առանձին արմատներ է
համադրել, այլ նաև «կը բաղդատէ... գլեբականական վերջաւորու-
թիւնս անուանց և բայից, զկազմաւորութիւն բառից, զյետադաս վանկս
և զտառս, և այլն»²⁰: Արդէն մեր օրերում ի յայտ եկան աշխատութիւն-
ներ²¹, որ դիտարկում են ոչ միայն հայոց լեզուի, այլ նաև մշակոյթի
նմանութիւնները հեռու-հեռաւոր ծագերում բնակուողների հետ ապա-

¹⁵ D. McCausland, Shinar: The Scripture Record of the Confusion of Language and the Dispersion Verified by Modern Discovery, London, 1867, p. 38.

¹⁶ Տե՛ս R. Ellis, The Armenian Origin of the Etruscans, London, 1761, էջ 175: Տե՛ս նաև նոյնի «Sources of the Etruscan and Basque languages», London, 1886. յատկապէս հայերէնով և սանսկրիտով ստուգաբանութեան մասերը՝ էջ 55-62 նւ:

¹⁷ «Ուսումնասիրութիւնք Հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրևմուտս (ԺԷ.—ԺԹ. դար)», Վենետիկ, 1895, էջ 324:

¹⁸ Տե՛ս իր «Etruskisch und Armenisch. Sprachvergleichende Forschungen», Christiania, 1890, 172 էջ: Տե՛ս նաև «Հայերէն լեզուին գոթարէնի վրայ ըրած ազդեցութիւնը» երկը, «Հանդէս Ամսօրեայ», 1895, էջ 227-231 և շար.:

¹⁹ «Ուսումնասիրութիւնք», անդ:

²⁰ Նոյն տեղում, էջ 325:

²¹ Տե՛ս օր. L. Ստեփանեան, Հայ-պօլիներգեան լեզուամշակութային ընդհանրու-
թիւններ, Եր., 2015, նոյնի «Հայերէնի եւ պօլիներգիական լեզուների հնչիւնական որոշ
յատկանիշների գուգադրական համեմատութիւն», «Էջմիածին», 2018, ԺԲ., էջ 49-67:

ցուցելով, թե վաղնջահայոց հետ հարազատութիւն է նկատուում ցամաքային ճանապարհով անհասանելի տեղերում անգամ դրանով հաստատելով, որ էյլիսի ուշադրութիւնը գրաւած օրինակները պատահականութեան արդիւնք չեն: Եւ հետևաբար առնուազն միակողմանի է դառնում հայերէնն իբրև զուտ ընդունող լեզու ներկայացնելը: Իսկ եթէ գերակայ ենք համարում անգլիացի և նորուեզացի հայազէտների տեսակէտները, ապա հայերէնն ընդունողից վերածուում է շնորհողի՝ համապատասխանաբար ծանրացնելով նախնի լեզուին ներկայացուող պահանջների բարարարման նժարը:

Միանշանակ է կարծիք չպետք է ստեղծուի, թէ հայերէնի նախնականը լինելու միտքն արծարծել են միայն հայ հետազոտողները՝ հայկական փակ շրջանակում: Այս առթիւ յիշելի են «Բազմավէպի» տողերը, թէ՛ «...աս կարծիքիս գրով հրատարակողներուն առջինը եղած է մեր բարեյիշատակ շ. Միքայէլ վարդապետը Չամչեան, երկրորդը բարեյիշատակ շ. Ղուկաս վարդապետը Բնճիճեան, և երրորդը բազմարդիւն շ. Մկրտիչ վարդապետը Աւգերեան, որ Հայոց լեզուին առաջնութեանը վրայ Վենետիկոյ Աթենէոն ըսուած ձեմարանին մէջ լատիներէն ձառ մը խօսած է 1828ին, և բոլոր հոն եղած իմաստուններէն գովեստ ու հաւանութիւն լսեր է»²²: Ստորև ներկայացուող թարգմանութիւնը (*A Dissertation on the Antiquity of the Armenian Language*) արդէն ոչ միայն հնչել է անգլերէն խօսող միջավայրում, այլ նաև տպագրութեան արժանացել անտարկելի յարգի և վարկի «*Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland*» պարբերականում²³: Հեղինակն Արրատուն Իսաակ Ազանունն է, որ ըստ հարկի կիրառել է նաև իր նախորդների առաջ քաշած հիմնադրոյթները: Կարևոր է նաև, որ յօդուածին կցուած են Թագաւորական Ասիական ընկերութեան Բոմբէյի մասնաճիւղի քարտուղար պրն Թ. Մ. Դիքէնսօնի²⁴ ծանօթագրութիւններն ու դիտարկումները, որտեղ արտայայտուած մտքերն ընդհանրապէս անհնար է վերագրել «ազգային սնապարծութեանը». «...պետք է բնական կարծել, որ Նոյն Արարատի լեռներից շատ չի հեռացել, և նախնական լեզուն, եթէ ընդհանրապէս պահպանուել է, ապա պահպանուել է նրա բնակեց-

²² Նշվ. համարը, էջ 336:

²³ Տե՛ս հտ. 4, թողարկում 8, 1837, էջ 333-344:

²⁴ Արրատուն Իսաակ Ազանունի և Դիքէնսօնի մասին կենսագրական տուեալներ ներկայ պահին համացանցում չկան: Նաև Ծածկանունների բառարանում չկար Արրատուն Իսաակ Ազանուն, սակայն կարող ենք վստահ լինել, որ գործ ունենք հայ ազգասէր մտաւորականի հետ: Այս վստահութիւնը չի հիմնուում լոկ նորջուղայեցի լինելու հանգամանքի վրայ. Պարսկաստանում և Հնդկաստանում բնակուող բազմաթիւ հայեր են յայտնի անուան Arratoon-Aratoon-Arathoon տառադարձութեամբ: Թերևս ամենաշատ լիցատակուածը նորջուղայեցի Արաթուն Աբգարն է (Arratoon Apar)՝ երբեմնի մեծագոյն բեռնափոխադրող ընկերութեան հիմնադիրը: Օտարները ևս տեղեակ են, թէ նշեալ տարածքներում հայոց մէջ տարածուած Արաթուն անունը մայրենիի Յարութիւն-Արութիւն ձևի փոխանցումն է. տե՛ս օր.՝ **B. Bhattacharya**, Ports, Hinterlands and Merchant Networks: Armenians in Bengal in the Eighteenth Century. «Hinterlands and Commodities: Place, Space, Time and the Political Economic...», Brill, 2015, էջ 102:

րած տարածքում: Կարելի է նաև կարծել, որ դէպքերի բնականոն ընթացքի մեծագոյն հաւանականութեամբ առաւել հնարաւոր տարբերակն այն է, որ նախնական լեզուն պահպանուել է Հայաստանում. փաստարկման այս տեսանկիւնից հաւանականութիւնը հայերի օգտին է»:

* * *

Նիւթը վերցրել ենք Քէմբրիջի համալսարանի կայքից՝
http://journals.cambridge.org/abstract_S0035869X00014830 հասցէից:
Բնագրի ծանօթագրութիւնները դրել ենք շարադրանքի վերջում՝ հռոմէական
համարակալմամբ:
Էմմանուէլ վրդ. Աթաջանեան (Երուսաղէմ)
Գեորգ Մադոյեան, բ. գ. թ.
Սիրանոյշ Մադոյեան

ՔՆՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՀՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ԱՐՐԱՏՈՒՆ ԻՍՍԱԿ ԱԳԱՆՈՒՆ (Նոր Զուղա)

Ծանօթագրութիւններով և դիտարկումներով
Թագաւորական Ասիական ընկերութեան
Բօմբէյի մասնաճիւղի քարտուղար
պրն Թ. Մ. Դիքէնսօնի
(Ընթերցուած 1836 թուականի դեկտեմբերի 17-ին)

Սուրբ Գրոց ինչպէս և հարցին առնչուող հնագոյն պատմութիւններում առկայ վկայութիւններից կարող ենք արդարացի կերպով եզրակացնել, որ Ադամի օրերից մինչև Նոյի ժամանակները, հետեւաբար մինչև լեզուների բաբելոնեան խառնակումը «էր ամենայն երկիր՝ լեզու մի, եւ բարբառ մի ամենեցուն» (Օնտդ. ԺԱ. 1): Ուստի հարցը հանգում է հետևեալին. արդե՞օք լեզուների բաբելոնեան խառնակութիւնը պատիժ էր լոկ նրանց համար, որ *Մէնասարի* դաշտում ամբարիշտ և ապստամբ գործին էին նուիրուել, թէ՞ մեղսագործների պատիժը նոյնութեամբ տարածուել է նաև անմեղների վրայ. ինչպէս, ասենք, Նոյի և իր այն ժառանգների, որ պատկառելի նահապետի հետ մնացել էին Հայաստանում: Որովհետև եթէ ընդունում ենք, թէ Նոյի լեզուն մնաց անխառնակ, ապա յուսով եմ, որ կկարողանամ գոհացուցիչ կերպով պացուցել, որ լեզուն այդ հայերէնն է: Այս հարցի առնչութեամբ բազմաթիւ կարծիքներ են առկայ. եւ չնայած անվիճարկելի վաղնջութեան մի շարք ժողովուրդներ (օրինակ՝ ասորիները, եբրայեցիները, քաղդէացիները, եգիպտացիները) համարել են, թէ նախնական՝ Նոյեան լեզուն մնացել է, սակայն նրանցից և ոչ մէկը չի համաձայնում միւսի հետ, երբ անհրաժեշտ է լինում որոշել, թէ ո՞րն է այդ նախնական լեզուն: Նրանցից ամեն մէկն աւելի հակուած է իր յաւակնութիւններին յագուրդ տալ, քան իրականութիւնն արդար և անկողմնակալ քննութեան ենթարկել: Եւ քանի որ նրանցից ոչ ոք աւելի զօրեղ փաստարկներ չի բերել ի պաշտպանութիւն իր տեսակէտների, քան նրանք, ովքեր պնդում են, թէ եբրայեցերէնն է նախնական և հին լեզուն, մենք կսահմանափակուենք նրանց փաստարկների և պատճառաբանութիւնների վերաբերեալ հատ ու կենտ դիտարկումներով՝ յոյս տածելով, որ ի վիճակի կլինենք ապացուցելու դրանց անբաւարար կամ անհամոզիչ էութիւնը:

Եբրայեցերէնի սկզբնականութեան հիմնական փաստարկը բխում է այն հանգամանքից, որ նախաջրհեղեղեան նահապետների անձնանուններից շատերը եբրայեցերէնում պահպանել են Մովսէսի գրքերում

իրենց տրուած մեկնութիւնները¹: Եւ երբ Մովսէսն աստուածային ներշնչմամբ եբրայեցերէնով գրում էր հրեաների համար, մենք հիմնաւոր կերպով կարող ենք ենթադրել, որ կարևոր բառերի հանդիպելիս, անգամ եթէ դրանք յատուկ անուններ էին, ինքը փոխադրելու էր այնպիսի յորջորջմամբ, որը հասկանալի կլինէր այն ժողովրդին, ում համար ինքը գրում էր: Ուստի Ղամէքի մասին պատմելիս նա ցանկացաւ Իսրայէլի որդիներին հասու դարձնել, թէ այդ նահապետն իր որդուն տուեց մի անուն, որ արտայայտում էր այն յոյսերը, որ հայրը տածել է զաւակի ծննդեան պահին՝ ասելով. «*Մա հանգուսգէ զմեզ ի գործոց մերոց եւ ի տրտմութեանց ձեռաց մերոց*» (Ծննդ. Ե. 29): Մարգարէն նշում է՝ «*Եւ անուանեաց զանուն նորա Նոյ*». եբրայեցերէն բառ, որ յարմարեցուած է հրէա ազգի ընկալմանը՝ «*հանգիստ կամ մխիթարութիւն*» իմաստով: Նմանատիպ կերպով նաև միւս հին ազգերը այս նահապետի մասին ւսանդութիւններում նրան յիշում են ոչ թէ իր եբրայական Նոյ (իրենց համար անհասկանալի և անիմաստ բառով) կոչմամբ, այլ ուրիշ անուններով. ինչպէս ասենք՝ *Սատուրն*²⁵, *Քսիսութրուս* և այլն. բառեր, որ նրանց լեզուներում կրում են այն իմաստը, որը նրանք ցանկացել են արտայայտել: Նոյնն է Մովսէսի գրքերի պարագան. ԻՉ. 20-ն անգլերէն է թարգմանուած. «*And he called the name of the well Ezek, because they strove with him*» ձևով, իսկ հայերէնում ընթերցում ենք՝ «*եւ կոչեաց զանուն ջրհորոյն Ջրկումն*. քանզի *գրկէին* զնա»²⁶ գիտակցելով, որ ոչ թէ ջրհորն իրականում կոչուել է *Ջրկումն*, այլ մենք ենք օգտագործում «*գրկումն*» նշանակող բառ՝ արտայայտելու զաղափարը, որը եբրայեցերէնում ներկայացուած է *Եզէկով*: Նմանապէս և Յովսեփոս Փլաւիոսը, երբ գրում է, որ հայերը տապանից իջնելու վայրը Ապօբատերիօն (Joseph. Antiq. 1. i. c. 3.) են կոչում, սա չի նշանակում, թէ հայերն իրականում յունարէնից փոխառեալ բառ են կիրառել, այլ հեղինակն այսու ուզում է ասել, որ տեղանքի անունը նոյն իմաստն է արտայայտում, ինչ յունական «Ապօբատերիօն» բառը, որը խորհրդանշում է «*էջքի վայրը*» և հայերէնում ներկայացուած է Նախիջեւան (Nakhijivan) ձևով, որ ցայսօր այդ վայրի անունն է:

Ոմանք պնդում են, թէ լեզուն, որով գրուել են Մովսէսի գրքերը, Ադամի լեզուն էր, քանի որ, ըստ վերջիններիս, ակնյայտ է՝ Մովսէսը գրել է լեզուով Աբրահամի, որից սերում էր ինքը: Նոյն կերպ Աբրահամը կիրառել է Թարայի լեզուն՝ ժառանգուած Մէմից, որ իր հերթին շարունակել է հաղորդակցուել Նոյի խօսուածքով, որ Ադամի լեզուն էրⁱⁱ: Ինձ թում է՝ սա բնականօրէն ծագող հարց է, և դժուար թէ արժանի է առանձին փաստարկման, քանի որ հաւասարապէս կարող է կիրառուել

²⁵ Այժմ արդէն պարզուած է, որ երոպական ւսանդութեան մեջ Նոյը ոչ թէ Սատուրնն է, այլ Եանուսը:

²⁶ Հմմտ. աշխարհաբար՝ Նրանք ջրհորը կոչեցին Անիրաւութիւն, քանի որ նրա հանդէպ անիրաւութիւն էին գործել:

նան միւս վաղնջական լեզուների պարագային: Անշուշտ կան պնդողներ, որ հրեաների նախահայր Եբերը չի մասնակցել Բաբելոնեան շինարարութեանը, և, հետեւաբար, նրա լեզուն մնացել է անփոփոխ: Բայց յունական աղբիւրները, որոնք պահպանել են այս պատմութիւնը, այլ և այլ տեղերում հակասում են տարածուած կարծիքին՝ արձանագրելով, թէ իրականում Եբերը Բաբելոնի աշտարակաշինութիւնը ղեկավարող ճարտարապետն էր, որ վերահսկում էր կառուցողների աշխատանքները՝ ուշիմ հայեացքի ներքոյ Բել կամ Նեբրովթ կոչուածի, որը գերագոյն իշխանութիւն էր հաստատել բոլորի վրայ: «Փոքր Ծննդոց»²⁷ վերտառութեամբ [վկայած] մի աշխատութիւնից քաղելով՝ Սինկելլոսը պատմում է, թէ դրանում առկայ արանքութեան համաձայն հրեշտակը յայտնուեց Մովսէսին և ասաց նրան, որ ինքը եբրայեցերէն է սովորեցրել քաղղէացի Աբրահամին, և այդ իսկ պատճառով եբրայեցերէնը նախնական է համարում: Բայց այս տեղեկութիւններն ակնյայտօրէն առասպելաբանութիւն են, քանի որ հակասում են թէ՛ իրար, թէ՛ Սուրբ Գրոց պատմութիւններին:

Կասկածից վեր է, որ Աբրահամը խօսել է քաղղէերէնⁱⁱⁱ (տե՛ս Ծննդ. ԺԱ. 28—31, Յուդիթ Ե. 6, Գործք Է. 4):

Դիտարկուող շրջանում քաղղէացիները բնակուում էին մի երկրում, որ անմիջական հարևանութեամբ էր *Սէնսարի*, որտեղ տեղի ունեցաւ լեզուների խառնակութիւնը: Ուստի ի՞նչ հիմքի է խարսխուում այն պնդումը, թէ քաղղէացիների լեզուն անխառն մնաց: Եթէ ենթադրենք, թէ իրարամբ այդպէս է եղել, ապա շատ կհեռանանք հարցի լուծումից, որովհետև փինիկեցիների, ասորիների, արաբների և այլոց լեզուները, եբրայեցերէնի հետ մէկտեղ, հաւասարապէս հարազատ բարբառներն են քաղղէերէնի, և իրարից տարբերուում են ոչ թէ հիմնարար սկզբունքներով, այլ լոկ այն աստիճանի, որ այսօր կարելի է նկատել հայերէնի բարբառներում՝ Պուլսի, Ջուղայի, Ագուլիսի խօսուածքներում, կամ Եւրոպայի որոշ լեզուներում, որոնք առաջացել են գրեթէ նոյն ժամանակահատուածում՝ մէկ միասնական արմատից: Աւելին, եթէ շարունակեն պնդել, թէ քաղղէացոց լեզուն անփոփոխ մնաց, ապա այդ դէպքում ստիպուած կլինենք հարցնել. ո՞ր ազգի լեզուն խառնակուեց Բաբելոնի աշտարակաշինութեան ժամանակ: Որնէ հիմք չկայ ասելու, թէ դա պատահեց Նոյի և իր հետ Հայաստանում մնացածների լեզուին, որովհետև [Գրքերը] մեզ ասում են, որ հրաշքը Բաբելոնում եղաւ. «*Եւ էջ Տէր տեսանել զքաղաքն եւ զաշտարակն զոր շինէին որդիք մարդկան*» (Ծննդ. ԺԱ. 5)^{iv}:

Չենք կարող ասել նաև, թէ խառնակուողը պարսիկների, յոյների կամ եգիպտացիների լեզուն էր, քանի որ հիմքեր չունենք ենթադրելու,

²⁷ Յայտնի է նաև «Յոբելէնից գիրք», «Մովսէսի Յայտնութիւն» և «Գիրք Բաշխմանց» վերնագրերով: Արարատեան երկրին վերաբերող հատուածները տե՛ս «Էջմիածին», 2012, Բ., էջ 58-70. «Յոբելէնից գիրքը՝ Հայքի մասին»:

որ Յունաստանը, Պարսկաստանն ու Եգիպտոսը այն ժամանակ բնակեցուած էին: Ակնյայտ պատասխանն այն է, որ [լեզուների խառնակութեանը ենթարկուողները] նրանք էին, ովքեր բնակուում էին այն վայրի անմիջական հարևանութեամբ, որտեղ երևաց Աստծու զօրութիւնը: Եւ բոլոր հիմքերն ունենք կարծելու, որ դրանց թում նաև նրանք էին, որ հետագայում յայտնի դարձան որպէս քաղղէացիներ: Մրանից կարելի է եզրակացնել, որ ներկայիս քաղղէերէն յորջորջուածը, իր ազգակից բարբառների հետ մէկտեղ (արաբերէն, ասորերէն, փինիկերէն նն), պէտք է դիտարկուի իբրև լեզուների մի մեծ ընտանիք, որ ծագել է բաբելոնեան խառնակութիւնից: Անշուշտ կան նաև այնպիսիները, որ պնդում են, թէ քաղղէերէնը եբրայեցերէնից է ծագել. կարծիք, որ ոչ միայն խիստ անհաւանական է, այլև ուղղակիօրէն հակասում է Մուրբ Գրոց մէջ արձանագրուած փաստերին: Որովհետև Մովսէսը պատմում է, թէ «...սակ Աստուած ցԱբրամ. «Ել դու յերկրէ քումմէ եւ յազգէ քումմէ եւ ի տանէ հաւր քո»,»- և մենք յստակ գիտենք. նա քաղղէացիների երկրում էր, և պարզ է, որ Աբրահամը քաղղէացի էր: Եւ քանի որ պատմութիւնը վկայում է, որ քաղղէացիները երբեք շատ չեն հեռացել Ուրից և Խառանից (որտեղ սկզբնապէս հաստատուած էին և որտեղ յընթացս ժամանակի հզօրագոյն ազգ դարձան), կարող ենք տեսնել, որ Աբրահամն իր հայրենակիցներից և ոչ մի հեռաւորի չփրկեց, այլ միայն իր տան անդամների հետ ելաւ «ի Խառանէ», որպէս Տէրն էր պատուիրել իրեն: Նա իջաւ Քանանացոց երկիր ու Եգիպտոս և մինչև իր մահը մնաց Քանանացիների երկրում: Նրա որդի Իսահակը և Իսահակի որդի Յակոբը իրենց կեանքն անցկացրին նոյն օտար երկրում, որտեղ նրանք բնակուեցին 215 տարի: Յակոբի որդիները շարժուեցին դէպի Եգիպտոս, որտեղ իրենք և իրենց յետնորդները մնացին հետագայ 215 տարիներն, մինչև որ Մովսէսի գլխաւորութեամբ գնացին տիրանալու այն երկրին, որ Տէրը խոստացել էր իրենց նախահայր Աբրահամին: Այսպիսով դուրս է գալիս, որ այս 430 տարուայ միջոցին իսրայէլացիների լեզուն սահմանափակուած է եղել մի ընտանիքի անդամներով, որոնք եկուոր ու խորթ էին օտար երկրում: Եւ քանի որ այս ընթացքում նրանք շփուել և սերտ յարաբերութիւններ են վարել իրենց շուրջը բնակուողների հետ, ապա դժուար կլինի կարծել, թէ նրանք կարողացել են իրենց լեզուն պահել անաղարտ՝ ճիշտ այն վիճակում, ինչպիսին այն էր ի սկզբանէ, երբ Աբրահամը հեռացաւ Քաղղէացոց երկրից: Աւելին, կարող ենք տեսնել, որ այն լեզուն, որով գրուել են Մովսէսի գրքերը, և որը, պէտք է ենթադրել, իսրայէլացիների լեզուն է եղել, թէև հարազատ է քաղղէերէնին, այնուամենայնիւ ինքնուրոյն միաւոր է և նախորդից տարբերուող լեզու է: Յոյց է տրուել նաև, որ հիմքեր չկան ենթադրելու, թէ քաղղէացիների լեզուն անփոփոխ է մնացել բաբելոնեան խառնակութեան ժամանակ: Այնպէս որ եբրայեցերէնի՝ առանձնայատուկ, արտառոց և գերագոյն հին լինելու մասին պնդումները ոչ միայն վերին

աստիճանի անհաւանական են, այլն ակնյայտօրէն հակասում են արդար դատողութեանը, առ որը մեզ կամենում են ուղղորդել Սուրբ Գրոց գրառումներն ու դրանցից բխող մտայնագումները: Եւ քանի որ յարակից հին ազգերի լեզուների՝ նախնական լինելու վերաբերեալ պնդումներն առաւել լաւ հիմնաւորումներ չունեն, քան եբրայեցերէնի կապակցութեամբ բերուածները, ուստի ձեռնամուխ կլինենք այն փաստարկների շարադրմանը, համաձայն որոնց Նոյի, հետեւաբար նաև Ադամի լեզուն անփոփոխ պահել է հայ ժողովուրդը:

Սուրբ Գրքերն ասում են, որ Նոյն իր վեցհարիւրերորդ տարում տապան մտաւ՝ իր հետ վերցնելով ևս եօթ անձ. ի մասնաւորի՝ իր կին Նոյեմզարային (այս անունը պահպանուել է հայկական աղբիւրներում), իրենց երեք որդիներին՝ Յաբեթին, Սեմին ու Քամին, և նրանց կանանց: [Աւանդում է նաև], որ ջրհեղեղն սկսուեց և շարունակուեց այնքան, մինչև ոչնչացան բոլոր կենդանի էակները, բացառութեամբ տապանում գտնուողների: 150 օր երկիրը ծածկուած մնաց ջրով, որից յետոյ ջրերն աստիճանաբար նահանջեցին, և տապանը վերջապէս կանգ առաւ Արարատեան լեռների վրայ:

Լեռներն այս վստահաբար Հայաստանում են: Աստուածաշնչի ատորական և լատինական թարգմանութիւններում Արարատ բառը փոխադրել են «Արմենիա»: Նոյնն են նաև անգլերէն տարբերակի Բ. Թագ. ԺԹ. 37և ու Ես. ԼԷ. 38ը: Երեմիան ևս Արարատն օգտագործում է ի տեղի «Արմենիայի» ԾԱ. 27: Յովսէպոսը (Antiq. Lib. I. c. III) Արարատը կոչում է Արմենիայի լեռ և ասում, որ Բերոսոս Քաղդէացին այն անուանել է Արմենիայի Կորդոս լեռ: Նոյն անունով է այն կոչում Հին Կտակարանի արաբերէն և քաղդէական թարգմանութիւններում: Աբիւղէնսը, Նիկողայոս Դամասկացին և այլք Արարատը միահամուռ տեղաւորում են Հայաստանում: Հաւանաբար, վաղ պատմիչներից ամենահինը Մարիբաս Կատինան է, որին յիշատակելով (գ. Ա., գլ. Ը.) Մովսէս Խորենացին գրում է (գ. Ա., գլ. ԺԱ. և ԺԲ.), որ լեռն սկզբում կոչուել է Մասիս՝ Ամասիա նահապետի անունով (ցայսօր նրա անունով է կոչում Ամասիա քաղաքը), և որ Արարատը ողջ շրջակայ տարածքի անունն է, որ այսպէս յորջորջուեց ի պատիւ Արայի՝ [հայոց] մէկ այլ նախնու: Այն նաև յայտնի է իբրև Կորդոս. սա անուանում է մեծ լեռնաշղթայի, որի մաս է կազմում: Յովսէպոսը նշում է նաև, թէ իր ժամանակներում համոզուած էին, որ տապանի մնացորդները դեռ գոյութիւն ունեն: Սրան յատկապէս հաւատում էին հայերը, անգամ Սուրբ Յակոբ Մծբնայ հայրապետի ժամանակներում՝ Ք. հ. 340 թ.:

Վստահ եմ, որ փաստարկները բաւարար կերպով հերքում են թերևս յոյժ սակաւ ընթերցողների մտքում յարուցուած կասկածները, թէ արդեօք Արմենիայի լեռներից մէկի վրայ հանգրուանեց Տապանը: Իսկ քանի որ Սուրբ Գրոց մեջ ոչինչ չկայ, և ոչ մի հանգամանք չի հուշում, թէ Նոյը, իր փրկութեան հրաշական վայրը թողնելով, թափառա-

կան գնաց որոնելու մէկ այլ վայր, որտեղ կարող էր բնակութիւն հաստատել^{vi}, կարող ենք համեմատաբար վստահ կերպով ենթադրել, որ նահապետը և նրա այն ժառանգները, որ մնացին իր հետ, հաստատուեցին Հայաստանում՝ շարունակելով խօսել նախաջրհեղեղեան աշխարհի լեզուով:

Այժմ մենք Հին Կտակարանի այլազան օրինակներից գիտենք, որ այդ ժամանակներում ընդունուած էր որևէ նոր վայրի անուանման մէջ ամրագրել դրա հնամենի պատմութեան հետ կապուող որոշակի դրուագներ: Այսու կարելի է ենթադրել, որ այն երկրում, որտեղ, ինչպէս ցոյց է տրուել, Նոյը և իր ընտանիքը տապանից իջել և բնակութիւն են հաստատել, պէտք է լինեն վաղնջական շրջանի պատմական իրադարձութիւններին աղերսուող տեղանուններ, իսկ լեզուն, որով այդ անուններն ստուգաբանում են, պէտք է հանդիսանայ այն նախնականը, որով հաղորդակցուել են տուեալ ժամանակում: Ըստ Մովսէս Խորենացու Պատմութեան՝ տապանը կանգ առաւ Հայաստանում գտնուող Մասիս լեռան վրայ, որի փէշերին այսօր ևս կարող ենք տեսնել քաղաքն ու գաւառը, որ կոչուում են Առնոյոտն. այժմ ևս այս բառը հայերէնում նշանակում է «Նոյը ոտք դրեց»՝ Առ Նոյ ոտն²⁸: Եւ դարձեալ՝ Օննդ. Թ. 20-ում գրուած է. «Եւ սկսաւ Նոյ, այր հողագործ գերկիր գործել. եւ տնկեաց այգի»: Այժմ Առնոյոտնին մերձ է *Ակոռի* կոչուած տեղը, որ հայերէն նշանակում է թէ՛ «խաղողի այգի տնկեց»՝ *արկ* «տնկեց» եւ *ուռի* «որթատունկ»: Նոյն տարածքում է գտնուում *Նախիջեւան* կոչուող վայրը, որը նշանակում է «առաջին իջևան», իսկ այլոց ստուգաբանութեամբ՝ այն պէտք է կոչուի *Նախճուան-Նախչուան*^{vii}, որ կնշանակի «առաջին չուի [չուելու-մեկնելու] տեղը», որ երկրի արանդոյթներով այն վայրն է, որտեղից առաջին անգամ չուեցին-գաղթեցին առաջին հեռացողները, որ և Յովսէպոսը կոչում է Ապօբատերիօն՝ վկայելով, թէ այնտեղ է նաև Նոյ նահապետի գերեզմանը: Աւելին, հայոց պատմութեան մէջ ասում է, որ Նոյի կնոջ Նոյանգարի (կամ Նեմգարի, ինչպէս նրան անուանում են որոշ հեղինակներ) մահուանից յետոյ որդիները նրան թաղեցին մի տեղում, որ կոչուեց *Մարանդ*^{viii}. հայերէն սա նշանակում է՝ «Մայրն այնտեղ է՝ մայր անդ»: Անուն, որով ցայսօր կոչուում է Հայաստանի քաղաքներից մէկը: Եւ քանի որ այս վայրերն իրականում գոյութիւն ունեն ու Հայաստանի այժմեան լեզուով կրում են վերևում իրենց տրուած եզակի իմաստները, դրանք չեն կարող չդիտուել որպէս զօրաւոր ապացոյց յօգուտ այն դրոյթի, որ պատրաստուում ենք հրապարակել. *Նոյեան հե-*

²⁸ **ԱՌՆՈՅՈՏՆ**, գաւառ Մեծ Հայքի Վասպուրական նահանգում: Տարածուած էր Առնոս լեռան արլ լանջերին՝ մինչև Շատախ արանք: Յիշատակուում է «Աշխարհագրագ»-ում (VII դ.) և Թովմա Արծրունու «Պատմութեան» մէջ («Ոտն Առնոյ» ձևով): Նախկինում, սխալ ստուգաբանելով («Առ Նոյ ոտն»՝ «Նոյի ոտքերի մօտ»), երբեմն Ա. տեղադրել են Արարատ լեռան հրլ լանջին», տէ՛ս **Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, 1-5 հատորներ, Եր., 1986, 1988, 1991, 1998, 2001:

տևաբար նաև Ադամի լեզուն պահպանուել է Հայոց լեռներում: Պետք է առանձնակի նկատել, որ սրբազան պատմութեան մէջ չկայ որևէ դրուագ, որ կարող է հակասել բերուած կարծիքին: Անգամ բաբելական խառնակութեան կապակցութեամբ ասուած է «*զի անդ խառնակեաց Տէր Աստուած զլեզուս ամենայն երկրի*» (Օննդ. ԺԱ. 9): Անդ ասելով նկատի ունի Սէնաարի դաշտերը՝ Բաբելոնի երկիրը, ոչ թէ Հայաստանը, այլապէս բառն այդ անելորդ կլինէր: [Միւս կողմից] չի կարելի ասել, թէ այս հիմնաւորումը հաւասարապէս տարածուում է ոչ միայն Հայաստանի, այլ նաև միւս տարածքների վրայ և հիմքեր է տալիս պնդելու, որ Պարսկաստանի և Ասորեստանի ժողովրդի լեզուները նոյնպէս պետք է նախնականը լինեն: [Եւ պատճառն այն է], որ հիմքեր չկան ենթադրելու, թէ այդ երկրներն այն ժամանակ բնակեցուած են եղել, մինչդէռ քաջ գիտենք, որ Հայաստանը բնակեցուած է եղել ճիշտ այն պահից, երբ տապանը հանգրուանեց Արարատեան լեռների վրայ: Մեր տեսակետին օժանդակող նաև բազում այլ ապացոյցներ կարող են բերուել, որ հիմնուում են խնդրոյ առարկային առընչուող փաստերի ու հանգամանքների վրայ. դրանցից մի քանիսը կներկայացնենք ստորև: Հիմնականում ընդունուած է, որ լեզուների խառնակումը տեղի է ունեցել ջրհեղեղից յետոյ՝ Բ. դարում. ջրհեղեղ, որից յետոյ Նոյն ապրել է ևս 350 տարի: Հետևաբար խառնակութեան ժամանակ Նահապետը ողջ է եղել: Եւ դժուար է անգամ ենթադրել, թէ նա, ում Ամենակարողն ասել էր «*զքեզ տեսի արդար առաջի Իմ յազգիդ յայդմիկ*» (Օննդ. Է. 1.), նա, որ միակն էր, որ ընտանեօք հանդերձ փրկուեց աստուածային ահեղ վրէժից, այդքան շուտ պետք է [մոռանար ամեն բան]՝ միանալով «չար դաւադրութիւն» կոչուած ապստամբութեանն ընդդէմ Բարձրեալի. յատկապէս երբ կարողում ենք, թէ՛ «*Վասն որոյ եւ զհեղեղեալ երկիր միսանգամ փրկեաց իմաստութիւնն՝ չնչին փայտիւն արդարոյն նաւապետեալ... ծանեաւ զարդարն՝ եւ պահեաց զնա անարատ Աստուծոյ*» (Իմաստ. Ժ. 4, 5): Ուստի կարող ենք ենթադրել, որ ամբարիշտների պատիժը չի տարածուել «*ի վերայ արդարոյն*», և որ Նոյի (ու բոլոր նրանց, որ Նահապետից պատկառելով չէին միացել դէպի Սէնաար գաղթին) լեզուն չի ազդուել Բաբելոնի խառնակութեան ժամանակ, հետևաբար նաև նախաջրհեղեղեանների վաղնջական խօսքը Հայաստանում պահպանուել է անփոփոխ: Որևէ այլ տեղ գրուած չէ, թէ որտեղ վախճանուեց Նոյը, բայց հայերը մի աւանդութիւն ունեն, որ պահպանուել է «Ժողովածու» կամ «Հաւաքածու» կոչուող գրքում, որտեղ ասուում է, թէ նա թաղուել է իր կնոջ հետ՝ Մարանդում. Մինկելլուան ու Կեդրենուսը վկայակոչում են սա, իսկ Յովսէպոսը Նոյի մահը յիշատակելիս նշում է, որ դրանից յետոյ արտագաղթ եղաւ Հայաստանից: Սրանից կարելի է եզրակացնել, որ Նոյը Հայաստանում է վախճանուել:

Եթէ ընդունում ենք, որ Նոյի լեզուն Հայաստանում պահպանուել է մինչև յիշեալ նահապետի մահը, բացառում ենք նաև, թէ այն փոխուել է

յաջորդող փուլերում, որովհետև Հայաստանի հնամենի իշխաններն անխոտոր ազգաբանութեամբ սերել են Հայկից, որ Նոյեան [կրտսեր] ժամանակակիցն էր և նոյն շրջանում նրա հետ ապրում էր Հայաստանում: Եւ չնայած հետագային օտարերկրեայ տերութիւնները մեր երկիր են ներխուժել ու զաթել, լեզուն չի ենթարկուել էական ազդեցութեան, ինչպէս դա կարելի է տեսնել՝ համեմատելով տարբեր ժամանակների ասպատակիչների լեզուների հետ^{ix}:

Չէինք կամենայ ասել, թէ հայերէնը դարերի ընթացքին չի կրել այնպիսի մասնակի փոփոխութիւններ, որոնց ենթակայ են բոլոր լեզուները, որքան էլ որ կատարեալ լինեն: Մակայն պնդում ենք, որ այն ոչ մի էական փոփոխութեան չի ենթարկուել Նոյեան օրերից ի վեր, ուստի և այն մարդկութեան նախնական լեզուն է:

Եւ, յիշուի, բոլոր նրանք, որ օժտուած են դատելու ունակութեամբ, հայերէնի^x (անգամ մերօրեայ) հմայքն ու անզուգական կատարելութիւնը պետք է դիտեն իբրև ասպացոյց, որ այն իշխում է բոլոր միւս՝ վաղնջական կամ ժամանակակից լեզուներին (ներամփոփում բոլորի հնարաւորութիւնները). և սա բացառիկ հիմք է տալիս պնդելու, որ հայերէնն աշխարհի նախնական լեզուն է:

Եզակի փաստ է. բնիկ հայը, որ կատարելապէս տիրապետում է իր մայրենիի ընձեռած բոլոր հնարաւորութիւններին և ի գօրու է արտաբերել բոլոր ձայներն ու հնչիւնները, առանց որևէ դժուարութեան կարողանում է իւրացնել և վերարտադրել ցանկացած օտար լեզուի հնչիւնական համակարգն այնպէս, ասես իր հարազատ լեզուով է խօսում: Մինչդեռ մնացեալ լեզուներով խօսողների պարագային միշտ չէ, որ անգամ ցեղակից և միևնոյն նախնուց սերող բարբառի կրողները կարող են ամբողջութեամբ և լիովին վերարտադրել մէկը միւսի հնչիւնները: Նոյնը կարելի է ասել նաև մեր լեզուի զօրութեան կապակցութեամբ՝ միտքն ու իմաստը յստակ արտայայտելու կարողութեան. սա քաջ յայտնի է բոլոր նրանց, որ երբևէ փորձել են ցանկացած մի լեզուից որևէ երկ հայերէն թարգմանել. և որքան էլ խրթին կամ խորին է եղել այդ աշխատութիւնը՝ թարգմանութեան էջերում ի նորոյ յառնել է նոյնական կատարելութեամբ: Մինչդեռ հայերէնից որևէ հին կամ ժամանակակից լեզուով թարգմանելիս մեծագոյն երկունք ու դժուարութիւններ են առաջանում. ինչպէս կարելի է տեսնել Մովսէս Խորենացու Հայոց պատմութեան թարգմանութիւնից, որ հանրայայտ Ուիլիամ Վիսթօնի որդիներն են արել. Գիրքն այդ մի կողմից ի ցոյց է դնում երկու ուսեալ անգլիացիների հագուադէպ բեղունութիւնն ու հայերէնի բացառիկ իմացութիւնը, իսկ միւս կողմից համոզիչ ասպացոյց է բոլոր խնդրոյ առարկայի վերաբերեալ դատել կարողացողների համար, որ շատ տեղերում թարգմանիչներն անկարող են եղել փոխանցել ոգին հին հեղինակի, որի երկասիրութիւնը նրանք այդքան բժախնդրօրէն և այդպիսի ներհմտութեամբ լատիներէնի են վերածել:

Հաւանաբար պէտք է անդրադառնալ նաև պատմիչների այն յիշատակութեանը, որ Հայկ Նահապետը՝ հայ ազգի մեծ նախնին, խառնակութեան ժամանակ Բաբելոնում է եղել, իսկ դրանից յետոյ հետևողների փոքրիկ խմբով վերադարձել է և հաստատուել Հայաստանում: Եւ սրանից կարող է առարկութիւն ծագել առ այն, թէ քանի որ նրա լեզուն Բաբելոնում պէտք է եղծուած լինէր, նրանից սկսեալ Հայաստանի լեզուն այլևս փոխուած է: Այս կապակցութեամբ նախ պէտք է նկատենք, որ Հայկագեան լեզուի՝ Բաբելոնում փոխուած լինելու տեսակէտն ամեննին համընդհանուր ընդունելութեան արժանացած կարծիք չէ: Եւ երկրորդ, եթէ փորձում ենք ենթադրել, թէ իրօք այդպէս է եղել՝ հարց է առաջանում՝ Մի թէ հաւանական է, չենք ասի իրականանալի, որ Նոյի յետևողն իր սակաւ խմբով կարողանար ջնջել Նահապետի և նրա հետ Հայաստանում մնացածների լեզուն և նրանց բոլորին սովորեցներ Բաբելոնում խելուածը: Դրական պատասխանը չի կարող հիմնաւորուել որևէ ապացոյցով կամ կռուանով, և, հետեւաբար, առարկութիւնն այս պէտք է համարուի առ ոչինչ՝ իբրև ոչ իսկ արժանի ուշադրութեան:

Բնագրի ծանօթագրութիւնները

i Այս կարծիքը հաստատող ապացոյցները հակիրճ և գիտակ կերպով շարադրել է Մեմբլե Բօքարտը: Եւ քանի որ այստեղ բերում են դրանց անբաւարարութիւնն ի ցոյց դնող փաստարկներ, հետևեալ հատուածն ուշագրաւ կլինի:

«Ինչպէս երևում է Մովսէսի պատմութեան մէջ պահպանուած՝ արարումից մինչև ազգերի գրումը եղած բառերի ստուգաբանութիւնից, երբայցեքէնք յատ հին լեզու է: Այսպէս օրինակ՝ եբր. 179 բառով բնորոշուող Եղեմը «հաճուից և արարածանքի այգի» է: 77: Նոյ երկիրը, ստրկութեան երկիր է, դատապարտութիւն կրելու վայր: 222-ը «խառնակութիւն» է, որովհետև լեզուները խառնուեցին: Առաջին մարդը 278 Ադամ կոչուեց, որովհետև 2277 հողից կամ կաւից էր կերտուած: Առաջին կինը 707 Եւա՝ կեանք կոչուեց, որովհետև բոլոր կենդանականներիս մայրն է: Մերունդներից մէկը՝ Գայէնը 117, այդպէս կոչուեց, քանի որ իր մօրն Աստուած ամուսին շնորհեց: Մէկ ուրիշը՝ Սէթը 177, իր անունն ստացաւ՝ «Աստուած պարզեց ինձ» [ձևից]: Ենովքի որդին՝ օրհեղեղի տարում իր մահկանացուն կնքած Մաթուադան 17707, երևելի էր իր անուամբ, որ մարգարէաբար շնորհել էր հայրը: Փաղէկը 279 մեկուսի ապրեց՝ 2779 աշխարհից կտրուած: [Մակայն] ոչ մի եբրայական աննարկ, որ իր ապրելու ժամանակ Նոյը 2777 միջիարկել է, իսկ Յաբեթը՝ 277 օրհեղեղի տօնը ընդարձակուել»:

Փաստարկներն ընդդէմ քաղեագիների (որոնց պարագային առկա է նոյն պահանջատիրութիւնը, ինչպէս վերո նշուածները) հիմնում են Օննդ. Բ. 23-ի կապակցութեամբ արուած բօքարտեան արտայայտութեան վրայ, որը (Եւ ասէ Ադամ. Ա՛յս այժմիկ ոսկր լուսկերագ իմոց, եւ մարմին ի մարմնոյ իմոյ. սա՛ կոչեսցի կին, գի՛ արնէ՛ իւրմէ՛ առաւ) հասկանալի է միայն եբրայեցերէնում. (*arbit*-տղամարդ *ish* եբրայեցերէն *ish* է, իսկ կին [բառը] ձևաւորուած է տղամարդ [մատնանշող]՝ *ish-n* ընդդիմացումը՝ *ish-sah*- *ish*):

Դիտելի է, որ մեր շարադրանքում Նոյ [ձևի] օրինակով սահմանափակուող առարկութիւնները հաւասարապէս կիրառելի են վերը նշուած բոլոր դէպքերում:

ii Պնդմանն առաւելաբար կշիռ է հաղորդում այն փաստարկման վրայ հիմնուած դատողութիւնը, ըստ որի՝ Աբրահամն ու իր նախահայրերը (ուրիշ և անխտոր գծով մինչև Նոյ) դիտարկուում են որպէս ժառանգները ուխտի, որ Աստուած հաստատեց Նոյի և Ադամի հետ (Օննդ. Թ. 9 և Գ. 15), և ըստ այդմ որևէ հիմք չունենք ենթադրելու, թէ նրանք միացել են բաբելոնական ամբարիշտ գործին, որի պատիժը եղաւ խառնակութիւնը: Եւ հետևաբար նրանց լեզուն, անշուշտ, մնաց անփոփոխ: Այս պնդումը հմտօրէն

ձևակերպել է Բօքարտը՝ Phaleg. lib. i. c. X: Մակայն պետք է հակադարձել. պարզունակ ենթադրությունը, որ հիմնուած է մարդկային տրամաբանութեան և դատողութեան, հասարակ մահկանացուի պատկերացումների վրայ, թէ ինչը կլինէր առաւել ընդունելի կամ նպատակայարմար, Աստծու գործերի պարագային դառնում է ակունքն այն առաւել բեղուն սխալների, որ դրոշմուել են կրօնի կամ փիլիսոփայութեան պատմութեան էջերում: Մինչդէռ իրադարձութիւնների բնական և հաւանական ընթացքն անհամեմատ աւելի ապահով ուղեցոյց կարող է դառնալ ճշմարտութեան որոնման ճանապարհին այնքան անհասկանալի ու խրթին հարցում, ինչպիսին է խնդրոյ առարկան: Հիմա. եթէ ենթադրութիւնները թոյլատրելի են, պետք է բնական կարծել, որ Նոյն Արարատի լեռներից շատ չի հեռացել, և նախնական լեզուն, եթէ ընդհանրապէս պահպանուել է, ապա պահպանուել է նրա բնակեցրած տարածքում: Կարելի է նաև կարծել, որ դէպքերի բնականոն ընթացքի մեծագոյն հաւանականութեամբ առաւել հնարաւոր տարբերակն այն է, որ նախնական լեզուն պահպանուել է Հայաստանում. փաստարկման այս տեսանկիւնից հաւանականութիւնը հայերի օգտին է:

iii Միջագետքի Ուրը և Հարանը այն վայրերն են, որտեղ առաջին անգամ հաստատուած ենք գտնում քաղղէացիներին: Բօքարտն զգալի ազատութիւն է դրսևորում աշխարհագրութեան ասպարեզում, երբ պնդում է, որ քաղղէացիների այս վաղ նստավայրերը գտնուում էին «ոչ հեռու Կորդունէն տարածքից, որտեղ հաստատուել էր Նոյը»:

iv Այն, որ Նոյին և իր հետ մնացածներին չի ակնարկում «որդիք մարդկան» արտայայտութիւնը, համոզիչ հիմնաւորում է Բօքարտը. «Այնուամենայնիւ, ոչ Նոյը, ոչ Մեմը, ոչ Արփաքսաղը կամ Եբերը, որ հարագատ էին մնացել Ուխտին, ըստ ամենայնի չէին մասնակցում դաւադիր գործին, որովհետև նրանք կարծես ի բաց են առնում, երբ [Մենդ. ԺԱ.] 5-րդ տողում Աստուած իջնում է, որպէսզի տեսնի քաղաքն ու աշտարակը, որ կառուցում էին ԾԴԸ ԴԻ մարդկանց որդիները: Նոյն կերպ Մենդ. Զ. 2-ում մարդկանց դուստրերը հանդէս են գալիս որպէս անհատներ, ուստի [Մենդ. ԺԱ.-ում] Մովսէսն ակնարկում է միայն ու միայն մարդկանց որդիներին, այսինքն՝ չարին նուիրուած անհատներին» — Phaleg. lib. i. c. 10»:

v Խօսելով Արարատ լեռան մասին՝ Տաւերնիէն, որ ԺԷ. դարում ճանապարհորդել է Հայաստանով, ասում է. «Արարատ լեռը հայերը կոչում են Մեսեզու-սար (Mesezou-sar), այսինքն՝ Տապանի սար: Դրա մօտով անցնելիս հայերը համբուրում են երկիրը՝ երկրպագում են: — Voy. de Taver. v. i. c. 2.

Ըստ Բօքարտի՝ «Ընդունուած է կարծել, որ Արարատը Հայաստանն է»: Տե՛ս Phaleg. lib. iii. c. III., որտեղ նա հանգամանալից խօսում է այս հարցի վերաբերեալ:

Բրեանթը նմանատիպ կարծիքի է: Արարատը նա բխեցնում է երբ. ԴԴԴԴ Հարիրադ ձևից, որ նշանակում է *ἀποβατήριον* էջքի լեռ: — Vol. iii. էջ 4:

vi Ստրաբօնը վկայում է Հայաստանի [հողի] եզակի բարունակութեան մասին՝ ակամայից հերքելով առարկութիւնները նրանց, ովքեր պնդում են, թէ տապանը Հայաստանում չի հանգրուանել, որովհետև Սուրբ Գրոց մեջ ասուած է, որ Նոյը տապանի կայանած ժամանակ աղանի բաց թողեց. «Եւ դարձաւ առ նա աղանին ընդ երեկս եւ ունէր տերեւ *ձիթենույ* շիղ ի բերան իւրում» (Մենդ. Ը. 11), իսկ Հայաստանում անկարելի է ձիթենի գտնել: Բայց Ստրաբօնը, Հայաստանի հիւսիսում գտնուող մի շրջանի պտղաբերութեան մասին կարճ հատուածի վերջընթեր մասում հետևեալ բառերն ունի *φέρει δε καί ε'λαϊαν*. «Այն նաև ձիթապտուղ է տալիս» — Geog. Lib. Xi. էջ 528:

vii Նախիջուան (Nakhijivan). Այս վայրը յաճախակի է յիշատակուում Եւրոպայի հեղինակների երկերում:

Պտղովէոսն այն անուանում է Naxuana, *Ναξουσα*: Tab. As. iii. էջ 135. Գիյօս դը Ռուբրուքը, որ 1253-ին ճանապարհորդեց դէպի Թարթարիա, նշում է դրա մասին. «Արաքսը և Նախուանան մերձ են Մասիս անուանեալ երկու լեռներին, որտեղ հանգրուանեց տապանը»:

Հռոմէացի հոգևորական [Կղեմէս] Գալանտը, որը գրել է Հռոմի և Հայ եկեղեցու միաբանութեան մասին, ասում է, որ, հայոց պնդումների համաձայն, տեղի իրական անունը Նախիջուան է, որով, ըստ նրանց, խորհրդանշում է «առաջին էջքի վայրը»:

Տաւերնիէն այն անուանում է Նաքսիւան (Naksivan) և ասում դրա մասին. «Ըստ նրանց, Նաքսիւանն աշխարհի ամենահին քաղաքն է. այն հիմնուել է երեք յէ (12 կմ) հեռաւորութեան վրայ այն լեռից, որի վրայ կանգնել է Նոյի տապանը: Հայկական ա-

նունն ստուգաբանում է՝ Nak «նալ» և Sivan՝ «քունուել կամ մնալ» ձևով.—Voy. de Taver., tom. i. c. 2.

Մովսես Խորենացու ուսեալ թարգմանիչները յիշատակում են այն: «Յովսեպոսը (Lib. i. c. 3.) Նոյի տապանից դուրս գալու մասին գրում է՝ «ἀποβατήριον μεν τοί τον τόπον τούτον Ἀρμήνιοι κάλουσιν»: Բացի այս տարածքը նա կոչում է Էջջի վայր: Ըստ այսմ՝ Արարատեան դաշտից ոչ հեռու հայկական հնագոյն քաղաքն է, որ յայտնի է աշխարհի վաղնջական արձանագրութիւններից. ջրհեղեղից անմիջապէս յետոյ Նոյը հիմնեց այն և շնորհեց Նախիջևան անունը՝ բառ, որ հայերն օգտագործում են առաջին էջջի վայր իմաստով»—Gul. et Geog. Whiston. in Praefat. ad Mosis Choren. Hist. Armen., p. iv.

viii Maranta. «Հայերը պնդում են, որ սա այն տեղն է, որտեղ Նոյը բնակութիւն հաստատեց, երբ դուրս եկաւ տապանից. նրանք յաւելում են, թէ նրան թաղել են այնտեղ, և որ նրա կնոջ գերեզմանը Մարանդում է՝ Թաւրիզ տանող ճանապարհին».—Voy. de Taver., tom. i. c. 2:

ix Այս մասին վկայում է Փարիզի l'École Royale-ի հայոց լեզուի պրոֆեսոր Սիրբիէն (Jacques Chahan de Cirbied— Յակոբ Շահան Ջրպետեան (1772-1834 թթ.) - հայ աւկանաւոր լեզուաբան). «Ասորական տիրակալների, մակեդոնացիների ու հռոմէացիների ժամանակներից մինչև Արշակունիներ հայերէնն օտար բառեր փոխառել է, սակայն լեզուի ներքին կառուցումը ոչ մի էական փոփոխութիւն չի կրել»:

x Թերևս հայերէնը յոյժ անտեսուած է եղել, ինչպէս և սխալ ներկայացուած: Դրա վերաբերեալ հին հեղինակների անդրադարձները խիստ աղքատիկ են: Ենթադրելի է, որ Հայաստանի հռոմէական գրաւումից քիչ անց իր գործը ձեռնարկած Ստրաբոնը, ի տարբերութիւն բազում այլ հին մատենագիրների, հայերէնի վերաբերեալ տեղեկութիւններ հաւաքելու լաւ հնարաւորութիւն է ունեցել, սակայն իրականում շատ քիչ բան է իմացել: Մի տեղ նա գրում է, թէ «Հայք եւ Մեդացիք ազգակից են Թեսալացոց» (Geog. lib. xi. էջ 531), իսկ մէկ այլ պարբերոյթում ասում է. «Թւում է Հայք հարազատ են Ասորոց և Արաբացոց» (Geog. Lib. I. էջ 41): Եւ յիշեալներին աւելացնում է Արիացիներին և Երեմբիներին՝ համարելով հարազատ ժողովուրդներ: Բացառուած չէ, որ նրա մոլորութեան պատճառ է հանդիսացել Հայաստանեան ռազմարշաւի ժամանակ հռոմէական բանակների հետ անմիջականօրէն շփուող հայ առևտրականների, վաշխատունների և լեզուն, որ շփոթութեամբ դիտարկուել է իբրև հայոց ազգային լեզու: Եւ նոյնիսկ սրբ Ուիլեամ Ջօնար (անգլ. բանասէր, 1746–1794 թթ.) ոչ պակաս ապատեղեկացուած է այս հարցի մասին, քանի որ ասում է, թէ Բենգալում հասանելի լաւագոյն տեղեկութիւններից ելնելով համոզուել է, որ հայերէնի հիմքը զենդերէնի հետ նոյն հնդկական ընտանիքից սերող հին պարսկերէնն է, և որ «Հայոց լեզուն աստիճանաբար փոփոխուել է այն ժամանակուսանից ի վեր, երբ Հայաստանն ազատուեց Իրանի գերիշխանութիւնից»: Բարեբախտաբար ունենք այնպիսի հեղինակների վկայութիւններ, որոնց իմացութիւնը հայերէնի ասպարեզում չի կարող կասկած յարուցել, ցոյց տալով նաև, թէ որքան սխալ են վերոբերեալ կարծիքները և հաստատելով մեր շարադրանքում առկայ պնդումները: Վիպթօն եղբայրները յայտարարում են. «Հայերէնի հնութեան մասին կարող ենք դատել այնու, որ նա չի առաջացել որևէ համեմատաբար նոր լեզուից»: Նոյն կերպ նաև Միրբիէն. «Չնայած որոշակի հարազատութեանը և նախնական բնոյթի ինչ-ինչ նմանութիւններին, հայոց լեզուն շարունակում է մեկուսացուած մնալ՝ առանց որևէ այլ լեզուի հետ խառնուելու» (Geog. Lib. I. էջ 6):

Ինչ վերաբերում է հայերէնի հզօրութեանը, որը մեր հեղինակը բերում է իբրև նախնական լեզու լինելու ապացոյց, ապա դա լիովին վկայում են հայերէնի առաւել զիտակ հեղինակները: Օրինակ վերևում յիշուած Վիպթօնները՝ «Quod si linguae Haicanae naturam hoc e genere prospicere libet, tantaest ejus copia atque ubertas, sibi maximam partem propria, non ab alia gentibus adscita, quantum ex studiis nostris cognoscere potuimus, ut vetustissimis temporibus primordia sua cepisse videatur»: Նոյն կերպ և Աւգերեանն է ասում իր երկում՝ Prsefat. ad Euseb. Pamph. Chron. Sect. ii. p. 11. «Id vero turn Haicanae linguae ubertati ac felicitati tribuendum quod in omnes prorsus dicendi modos inusuetos etiam et peregrinos facile inflectitur» նն: Եւ դարձեալ՝ «Saepe fit, ut in quibus e Grecco transferendis, Latini maxime laborant, ea Armenii majore nescio facilitate, an felicitate convertunt»: Ինչ վերաբերում է հայերէնի՝ նախնական լեզու լինելու հանգամանքին, ապա Ջրպետեանի հետևեալ տրամաբանական դիտարկումը թերևս պարունակում է նիւթի վերաբերեալ

ամենայն հնարաւորը: «Պատմաբաններն ու Աստուածաշնչի մեկնաբանները պնդում են, -ասում է պրոֆեսորը,- որ [ներկայիս] հայոց [կոչուող] լեզուով է խօսել Նոյը, և այն պահպանուել է այս նահապետի ժամանակներից մինչև այսօր: Համոզուած ենք, որ եթէ այս գուտ տեսական հարցում աշխարհիկ անկողմնակալ հեղինակների ւսանողածները զուգարդենք Սուրբ Գրքի հեղինակաւոր մտքերին՝ կգանք առաւել հաւանական տոյն եզրակացութեանը»:

Յօդուածի արծարծած խնդրի վերաբերմամբ ընդհանուր առարկութիւն կարող է առաջանալ առ այն, թէ հայերէնը գրաւոր լեզու չի եղել մինչև քրիստոնէական դարաշրջանի Ե. հարիւրամեակ, երբ մօտաւորապէս 406 թ. Մետրոպոլիտ հայերէնի այբուբեն ստեղծեց, որից յետոյ [լեզուի] ճկունութեան հիանալի աստիճանն ի ցոյց դրեցին հայոց գրագէտները, որ մինչև Ք. յ. 450 թուականը այլ և այլ լեզուներից հայերէն թարգմանեցին վեց հարիւր մատենագրական երկեր: Եւ կարելի է պնդել, որ այս հանգամանքը փաստարկ է ոչ միայն Հայաստանի հնագոյն ւսանողոյթների և պատմութիւնների վաւերականութեան, այլ նաև հենց լեզուի հնութեան դէմ: Բայց, իմ կարծիքով, առարկութիւնն այս այնքան էլ զօրաւոր չէ, որովհետև Հայոց պատմութիւնը քաղուած է անյիշելի հնութեան ւսանողութիւններից և գրաւոր աղբիւրներից: Աւանդութիւններից, որոնց կապակցութեամբ Մովսէս Խորենացին արձանագրում է, թէ հին հայերը դրանք պահել են երգերով, որ կատարում էին երաժշտութեան ներքոյ. սրանք անցեալի յուշարձաններ են, որ հասնում են մինչև ջրհեղեղի ժամանակները եւ Շամիրամի ու Ասորեստանի վաղնջական տիրակալների պատմական գրոյցները: Ինչ վերաբերում է պատմութիւններին, որ Մովսէս Խորենացին քաղեց լիովի, ինչպէս ինքն է յայտնում, յայտնի գրքից Մարիբաս Կատինայի, որին Քրիստոսից 130 տարի առաջ Հայոց Վաղարշակ թագաւորն ուղարկել էր քննելու Պարթեւ թագաւորների արքայական դիւանը, որտեղ Մարիբասը գտաւ մի մատենան, որ բացում էր Ալեքսանդր Մակեդոնացու հրամանով քաղդէերէնից թարգմանուած լինելու մասին գրառմամբ: Մարիբասը հաւաքեց Հայոց պատմութիւնը գրելու համար նիւթերը, և տեղեկանում ենք, որ նա այն շարադրեց յունարէն և ասորերէն: Աւելին, թէև հայերը երկար դարեր չունէին սեփական այբուբեն, օգտագործում էին հարևան ազգերի գրերը՝ հիմնականում յունական և պարսկական նշանները, որոնց մասին Մովսէս Խորենացին ասում է՝ «այժմ առ մեզ գտանին անբաւ գրուցաց մատենանք»: Ժամանակ առ ժամանակ օգտագործում էր նաև ասորականը, ինչպէս տեսնում ենք Դիողորոս Սիկիլացու երկում lib. xix: Մինչև Քրիստոսի Ե. դար հայկական գրի բացակայութիւնը ևս չի կարող փաստարկ հանդիսանալ նախնական լեզու լինելու դէմ: Արաբերէնը, գոնէ *կորէշ* կամ *քուրայշ* [կոչուածը], հայերէնից շատ աւելի երկար ժամանակ գրաւոր լեզու չի եղել: Ու թէև, ինչպէս արաբներն են պնդում, թէ [գրառուած չլինելու պատճառով] իրենց լեզուի բառերի մեծագոյն մասը մոռացութեան է մատնուել, մենք հիմքեր ունենք կարծելու, որ այդ նրբագէտ լեզուի կառոյցն էական կորուստ չի կրել: Խօսքերն ու արտայայտութիւնները, առգանութիւնն ու բառապաշարը, լեզուական այն ձևերը, որոնք ազուցուած են մարդկանց յիշողութեանն ու սովորութիւններին, թերևս արաբների պարագային փոխուել են նոյնքան, որքան տեսնում ենք եւրոպական ազգերում: Սակայն նրանց լեզուում դրոշմուած են կառուցուածքային անզուգական պարզութիւնն ու միատարրութիւնը, որ մշտապէս այն զերծ կպահեն եղծումից: Բացառութեամբ 1300 տարուայ ընթացքին շրջանառութիւնից դուրս մնացած մի շարք բառերի և արտայայտութիւնների իրենց հնագոյն գրուածքների լեզուն նոյնն է, ինչը կգործածի այսօրուայ ուսեալ արաբը: Եւ եթէ հայերէնի կառոյցում նոյնաբնոյթ կերպով պահպանուած շերտ կայ, ապա, կարծում եմ, միանշանակ է, որ այոյքան դարեր գրաւոր լեզուի կամ այբուբենի բացակայութիւնը չի կարող դիտուել իբրև ազդու փաստարկ առ այն, թէ երկրի լեզուն էապէս փոխուել է, կամ որ հենց այն լեզուն չէ, որով մարդկութեան արշալոյսին խօսել են Հայոց լեռների առաջին բնակիչները:

Բանալի բառեր – *Աստուածաշունչ Մատենան, արարչութեան լեզու, հայերէն, Ադամ, Նոյ, տապան, դրախտ, Հայաստան*

АРХИМАНДРИТ ЭММАНУЭЛ АТАДЖАНИЯН, ГЕВОРГ МАДОЯН, СИРАНУЙШ МАДОЯН – Язык творения, Адама и Ноя. – В статье ставится вопрос о языке творения, который, по мнению ряда специалистов, сохранился и перешёл от

Адама к Ною и далее к потомкам последнего. Наследниками этого первоязыка исследователи Библии называют разные народы, обосновывая свою точку зрения данными, почерпнутыми в Священном Писании. Среди возможных наследников языка творения фигурирует и армянский народ, причём это мнение подтверждается библейскими цитатами. Этой теме посвящена публикация «Журнала Королевского азиатского общества Великобритании и Ирландии», озаглавленная «Диссертация о древности армянского языка» (автор Arratoon Isaac Aganoon, том 4, выпуск 8, июль 1837 г., стр. 333–344), где приведены все необходимые выдержки и ссылки, которые убедительно доказывают, что если первоязык сохранился, он может быть армянским. Статья публикуется в армянском переводе.

Ключевые слова: *Книга Библии, Язык сотворения, Армянский язык, Адам, Ной, Ковчег, Рай, Армения*

ARCHIMANDRITE EMMANUEL ATAJANYAN, GEVORG MADOYAN, SIRANUJSH MADOYAN – *The Language of Creation, Adam and Noah.* – The article discusses the question of the language of the Creation that, according to the opinions of some researchers, was preserved and passed from Adam to Noah and from this ancestor to his descendants. The Bible scholars are mentioning different nations as the successors of the first language trying to prove their points of view mainly by the data that could be found in the Holy Scriptures. Among the possible successors of the original language is mentioned also the Armenian nation and this opinion could be proved by several paragraphs of the Bible. To this subject is devoted the publication of the “Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland” entitled “A Dissertation on the Antiquity of the Armenian Language” (author Arratoon Isaac Aganoon, volume 4, Issue 8, July 1837, pp. 333 - 344) where are brought all the necessary extracts and links that are surely demonstrating that if the original language is preserved it could be the Armenian language. So here it’s introduced to our readers in Armenian translation.

Key words: *Bible, Language of Creation, Armenian language, Adam, Noah, Ark, Paradise, Armenia*